# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 46 - 47 (16344) ՇԱԲԱԹ, 4 ՀՈՒԼԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔՄԵՆԻՍՏԱՆ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

### ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

*Հուլիսի 2-ին առաջին անգամ երկօրյա պետական այցով Թբիլիսի ժամանեց Թուրքմենստանի նախագահ Ղուրբանղուլի Բերդիմուհամեդովը: Թբիլիսիի միջազգային օդանավակայանում Թուրքմենստանի նախագահին դիմավորեցին Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին, պաշտոնական այլ անձինք:*



Ապա Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում տեղի ունեցավ Թուրքմենստանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունը, որին հաջորդեց Վրաստանի եւ Թուրքմենստանի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու ու Ղուրբանղուլի Բերդիմուհամեդովի դեմ առ դեմ հանդիպումը, ապա անցկացվեցին ընդլայնված կազմով բանակցություններ:

Պետական այցի շրջանակներում՝ Թուրքմենստա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՄՏԱԴԻՐ ԵՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»

*Վրաստանը մտադիր է Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորել «կառուցողական եւ առավելագույնս պրագմատիկ երկխոսության ճանապարհով»: Այդ մասին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց թբիլիսյան «Ասավալ-Դասավալի» թերթին տված հարցազրույցում:*



Նա հիշեցրել է, որ «ավելի քան երկու տարի առաջ Վրաստանն ուղղակի երկխոսություն սկսեց ՌԴ-ի հետ (նկատի են առնվում Աբաշիձե-Կարասին ձեւաչափով հանդիպումները), դա անհրաժեշտ էր, քանի որ մենք կարեւորում ենք հարաբերությունների կարգավորումը հարեւան պետությունների հետ»:

«Երկխոսության ընթացքում մենք հաջողությունների ենք հասել Ռուսաստանի հետ առեւտրատնտեսական հարաբերությունների վերականգնման ու զարգացման գործում, Վրաստանի համար բացվել է ռուսական շուկան, եւ դա կարեւոր է մեր երկրի քաղաքացիների համար»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Ինչ վերաբերում է երկու պետությունների միջեւ հարաբերությունների քաղաքական ասպեկտին, նա ասաց, որ «Ռուսաստանի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԺՆԵՎԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԵՎ ՑԽԻՆՎԱԼԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

*Վրաստանի արտաքին գործերի նախարարության կողմից տարածված հաղորդագրությունում նշվում է, որ Ժնեւի միջազգային բանակցությունների 32-րդ փուլն անցել է կառուցողական մթնոլորտում:*

Հանդիպումներն անցել են երկու աշխատանքային խմբերում: Առաջին խմբում քննարկվել են Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում անվտանգության եւ կայունության հարցերը, իսկ երկրորդում՝ այն հարցերը, որոնք կապված են իրենց տներ հարկադիր վերաբնակների եւ փախստականների արժանապատիվ վերադարձի հետ:

«Բանակցություններն անցել են կառուցողական մթնոլորտում: Երկու աշխատանքային խմբերի շրջանակներում կողմերն ամբողջությամբ քննարկել են այն բոլոր հարցերը, որոնք նախատեսված էին օրակարգով»,- ասվում է հաղորդագրության մեջ, որը մեջբերել է Sputnik գործակալությունը:

Առաջին աշխատանքային խմբի շրջանակներում անցկացված հանդիպմանը նշվել է, որ Աբխազիայի եւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



*Հուլիսի 2-3-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ամերիկյան կոնգրեսականների պատվիրակությունը, որի կազմում էին Ներկայացուցիչների պալատի անդամներ Պիտեր Ռոսկամը, Դեւիդ Փրայսը, Թոմ Ռայսը, Ռոբ Վուդալը, Դինա Թուսի եւ Լուիզա Քեփսը: Այցի շրջանակներում ամերիկյան օրենսդիրների հետ հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:*

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-ամերիկյան երկկողմ հարաբերությունները, ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանը Վրաստանի անդամակցության հեռանկարները, ինչպես նաեւ ԱՄՆ կոնգրեսում վերոնշյալ հարցերի ակտիվացման թեման:

Վրաստանի կառավարության ղեկավարն առանձնակի ուշադրություն հատկացրեց տարածաշրջանային անվտանգության եւ բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի հարցին:

Կողմերը հանդիպմանը քննարկեցին նաեւ գլոբալ անվտանգության հարցերը, ընդգծվեց միջազգային խաղաղարարական առաքելություններում Վրաստանի ավանդը:

Իրակլի Ղարիբաշվիլին կոնգրեսականներին շնորհակալություն հայտնեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության պաշտպանության, Միացյալ Նահանգների կողմից Վրաստանին ցուցաբերվող ֆինանսական օգնության համար:

ԳՈՐԾԱԴԻՐ

## ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՆ ԼԻՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆԸ

*Վրաստանի կառավարությունը սկսում է հանրային ծառայությունների բարեփոխումը:*



Հուլիսի 3-ին երկրի գործադիր իշխանության նիստում քննարկվեցին «Հանրային ծառայության մասին» օրենքի եւ մյուս օրենքների փոփոխությունների հարցերը:

Ինչպես հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, դա հանդիսանում էր «Վրացական երազանքի» նախընտրական խոստումը, ինչը վերաբերում էր արհեստավարժ հանրային ծառայության հիմնմանը: «Դա կարեւորագույն բարեփոխումներից մեկն է, որը սկսվել է մեր կառավարության օրոք եւ կիասցվի մինչեւ վերջ»,- հայտարարեց վարչապետը:

Նա օրինանախագծերի մշակման համար շնորհակալություն հայտնեց հանրային ծառայության բյուրոյի ղեկավար Էկա Քարդավային եւ կառավարության աշխատակազմի ղեկավար Մայա Ցքիտիշվիլուն, ինչպես նաեւ Եվրամիության, USAID-ի փորձագետներին: «Դա Եվրամիության եւ այցեգրային պայմանակարգի ազատականացման գործընթացի գլխավոր պայմաններից մեկն էր: Օրինանախագիծը կփոխանցվի խորհրդարանին եւ կընդունվի օրենք, որը աննախադեպ է, ես կասեի՝ հեղափոխական, քանի որ մեկընդմիշտ կկարգավորի այդ համակարգը եւ կստեղծի եվրոպական արհեստավարժ, արդի ծառայություն»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է»

*Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին գտնում է, որ զարգացման նպատակով բարձրալեռ տարածաշրջանների համար արտոնությունների սահմանումը սահմանադրական պարտավորություն է:*



Նշենք, որ հունիսի 25-ին Վրաստանի խորհրդարանի բյուրոն քննարկեց բարձրալեռ տարածաշրջանների մասին օրինանախագիծը, որով այդ տարածաշրջանների բնակիչների համար սահմանվում են սոցիալական որոշակի արտոնություններ:

«Երբ խոսքը վերաբերում է բարձրալեռ տարածաշրջանների մասին օրինանախագծի մշակմանը, ներկայացվեցին ոչ այնքան հիմնավորված եւ լուրջ մեկնաբանություններ: Ցանկանում եմ հիշեցնել բոլորին, սահմանադրական պարտավորությունը եւ Վրաստանի Սահմանադրությունը նախատեսում են բարձրալեռ տարածաշրջանների համար պետության կողմից արտոնությունների սահմանում: Վերոնշյալ օրինանախագիծը սահմանադրական պարտավորության կատարմանն ուղղված օրենք է»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՁԵՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ ՑՈՒՅՑ ՉԻ՞ ՏԱԼԻՍ, ՈՒՐԵՄՆ ԱՆՑԵՔ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ

Այսպիսով, 2015 թվականի հուլիսի մեկից Վրաստանում, ավելի ստույգ Թբիլիսիի, Սագարեջոյի շրջանի, Կոջորիի, Ռուսթավիի եւ Մառնեուլիի հեռարձակման գոտում համանման վերգետնյա հեռարձակումը փոխարինվեց թվային հե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի նախագահը հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլու հետ:

Վրաստանի եւ Թուրքմենստանի նախագահների հանդիպմանը Գիորգի Մարգվելաշվիլին՝ իր թուրքմեն գործընկերոջը շնորհավորեց ծննդյան օրվա առթիվ: Իր հերթին, Ղուրբանղուլի Բերդիմուհամեդովը Վրաստանի նախագահին հրավիրեց Թուրքմենստանի չեզոքության հռչակման 20-ամյակին նվիրված միջոցառումներին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ Թուրքմենստանի նախագահ Ղուրբանղուլի Բերդիմուհամեդովը հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացրեցին երկու երկրների միջեւ առեւտրա-տնտեսական համագործակցության հարցերին:



Թուրքմենստանի նախագահի Վրաստան կատարած այցի շրջանակներում՝ երկու երկրների միջեւ ստորագրվեցին տարբեր ոլորտներում համագործակցության յոթ համաձայնագրեր: Ստորագրվեց նաեւ տնտեսական համագործակցության հարցերով համատեղ հանձնաժողովի ստեղծման մասին պայմանագիրը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

*Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց «Ազգային բանկի մասին» օրենքի փոփոխությունները: Ըստ որի՝ Վրաստանի Ազգային բանկի համակարգից դուրս է բերվում բանկային ողջ ոլորտի նկատմամբ վերահսկողության ծառայությունը:*

Փոփոխության համաձայն, պետական վերահսկողության միակ մարմինը կլինի հանրային իրավունքի իրավաբանական անձ Վրաստանի ֆինանսական վերահսկողության գոծակալությունը, իսկ Ազգային բանկի շրջանակներում գործող վերահսկողության կոմիտեն վերացվում է:

Խորհրդարանում քննարկման ընթացքում առանձին փոփոխությունները լրացվեցին, մասնավորապես՝ փոփոխություններ կատարվեցին գործակալության խորհրդի ձեւավորման եւ դրա ղեկավարի ընտրության կարգում:

Խորհրդարանի լիագումար նիստում առաջին ընթերցմամբ ընդունվեց նաեւ օրենսդրական փաթեթը, ըստ որի՝ ներքին գործերի նախարարության կազմից դուրս է բերվում անվտանգության կառույցը:

Փոփոխության համաձայն, օգոստոսի 1-ից կկազմվի պետական անվտանգության ծառայություն, որը, որպես գերատեսչություն, անմիջականորեն կենթարկվի կառավարությանը եւ կառավարության հետ միասին հաշվետու կլինի խորհրդարանի առջեւ:

Պետական անվտանգության ծառայության բարեփոխման արդյունքում, ներկայումս ՆԳ նախարարության կառույցում ընդգրկված հակաահաբեկչական կենտրոնը, հակահետախուզության դեպարտամենտը, պետական անվտանգության գործակալությունը, հակակոռուպցիոն գործակալությունը, տեղեկատվական, վերլուծական դեպարտամենտը, հատուկ գործողությունների դեպարտամենտը եւ օպերատիվ տեխնիկական դեպարտամենտը կփոխանցվեն նորաստեղծ ծառայության համակարգին:

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ

## ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆԸ ԵՎ ԿԱԽԲԵՐ ՕՔՐԻԱՇՎԻԼԻՆ ՆՈՐ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՉԵՆ ՄԻԱՆԱ



Հ. ՄԿՈՅԱՆ



Կ. ՕՔՐԻԱՇՎԻԼԻ

*Հուլիսի 2-ին Վրաստանի խորհրդարանի «Անկուսակցական անկախ մեծամասնականներ» խմբակցության նախագահ Կախաբեր Օքրիաշվիլին եւ խմբակցության անդամ Հենզել Մկոյանը հանդես եկան հատուկ հայտարարությամբ:*

Հերքելով Ազգային շարժման նախկին անդամներին միանալու ու նրանց հետ միասին խորհրդարանական առանձին խմբակցության ստեղծման մասին տարածված տեղեկատվությունը, Հենզել Մկոյանն ու Կախաբեր Օքրիաշվիլին հայտարարեցին, որ իրենք, այո, քաղաքական տարբեր խմբերից ստացել են առաջարկություններ,այդ թվում հարգանքով են վերաբերվում Ազգային շարժումից հեռացած Զուրաբ Ջափարիձեին եւ նրա թիմին, սակայն մինչեւ 2016 թվականի խորհրդարանական ընտրություններն իրենց ներկայիս կարգավիճակը փոխելու մտադրություն չունեն:

«Մի քանի ամիս առաջ, ելնելով երկրի քաղաքական կայունության շահերից, մենք ընդունեցինք մեծամասնությանն անդամակցելու մասին «Վրացական երազանքի» առաջարկությունը, սակայն մեր որոշումներում միշտ պահպանել ենք մեր անկախությունը: Մինչեւ 2016 թվականի խորհրդարանական ընտրությունները մենք այս կարգավիճակը փոխելու մտադրություն չունենք»,- հայտարարեցին խորհրդարանականները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՄՏԱԴԻՐ ԵՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հետ երկխոսությունը պետք է շարունակվի»: «Միայն այս ճանապարհով մենք պետք է համաձայնության ու պայմանավորվածությունների հասնենք վրաց-ռուսական հարաբերությունների բոլոր կարեւոր թեմաների շուրջ»,- հավելեց վարչապետը:

Հիշեցնենք, որ Վրաստանի վարչապետի՝ ՌԴ-ի հետ փոխհարաբերությունների հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեի եւ ՌԴ-ի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի միջեւ առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2012 թվականի դեկտեմբերին Ժնեւի արվարձանում: Պրահայում 2013-2014 թվականների ընթացքում կայացել է յոթ հանդիպում, եւս մեկը տեղի է ունեցել այս տարվա փետրվարին: Չեխիայի մայրաքաղաքում հերթական կոնսուլտացիաները նշանակված են հուլիսի կեսերին:

# ԺՆԵՎԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԵՎ ՑԽԻՆՎԱԼԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ցխինվալիի տարածաշրջանի վարչական սահմաններին փշալարեր անցկացնելը եւ այլ արհեստական արգելքների ստեղծումը «կոպտորեն խախտում է տեղի բնակչության հիմնարար իրավունքները»:

Նաեւ դրվել է Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի տարածքներում անվտանգության միջազգային մեխանիզմների ստեղծման անհրաժեշտության հարցը:

Երկրորդ աշխատանքային խմբի շրջանակներում քննարկվել են վարչական սահմանով քաղաքացիների տեղաշարժման, մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքի հարցերը, Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի բնակիչների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, մշակութային ժառանգության եւ բնապահպանության հարցերը:

Նշենք, որ Ժնեւյան հանդիպումներին մասնակցում են Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի պատվիրակությունները, աբխազական եւ հարավօսեթական կողմերի ներկայացուցիչները:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

# ԻՐԵՆ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍ



Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրամանագրով Իրեն Տեր-Հովհաննիսյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի դեսպանության հյուպատոս:

Իրեն Տեր-Հովհաննիսյանը ավարտել է Երեւանի պետական ճարտարապետական համալսարանը: 1993 թվականից առ այսօր աշխատում է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում:

Եղել է Ուկրաինայում Հայաստանի դեսպանության երրորդ քարտուղարը: Որպես Հայաստանի Հանրապետության հյուպատոս՝ աշխատել է Բելառուսում եւ Բուլղարիայում:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԿԱՐԱՑՎԵՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

*Եվրամիության խորհուրդը, արտաքին գործերի նախարարների մակարդակով, Ռուսաստանի դեմ սահմանված տնտեսական պատժամիջոցների գործողության ժամկետը երկարացրել է վեց ամսով:*

*ՌԴ-ի նկատմամբ ԵՄ-ի տնտեսական պատժամիջոցները սահմանափակումներ են ներառում Ռուսաստանի գլխավոր պետական բանկերի, պաշտպանական ձեռնարկությունների եւ նավթարդյունաբերության ձեռնարկությունների վարկավորման ոլորտում:*

*Եվրամիությունը մեկ տարով՝ մինչեւ 2016 թվականի հունիսի 23-ը, երկարացրել է նաեւ պատժամիջոցները Ղրիմի նկատմամբ:*

*Ավելացնենք, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտնեց, որ ինքը ի պատասխան պատժամիջոցների երկարացման մասին Եվրամիության որոշման, հրամանագիր է ստորագրել ՌԴ-ի պատասխան պատժամիջոցների ժամկետը մեկ տարով երկարացնելու մասին:*

ՀՈՒՆԱՍՏԱՆ

## ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՎՃԱՐԵԼ ՊԱՐՏՔԵՐԸ

*Հունաստանը հունիսի 30-ին ԱՄՀ-ին չի փոխանցի հատկացված վարկերի գծով պարտքի մասը: Այս դիրքորոշման անփոփոխությունը հավաստել է երկրի ֆինանսների նախարար Յանիս Վարուֆակիսը:*

*«Հունաստանն այսօր պարտքի մասնաբաժինը չի փոխանցի ԱՄՀ-ին»,- ասել է նախարարը:*

*Ֆինանսների նախարարն ընդգծել է, որ շարունակում է հուսալ, որ վարկատուների հետ համաձայնագիրը կկնքվի:*

ԹՈՒՐՔԻԱ

## ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ ՄԵՐԺՎԵՑ

*Հունիսի 7-ին անցկացված խորհրդարանական ընտրություններում Թուրքիայի ներկայիս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի համանախագահությամբ 2002 թվականին իշխանության եկած «Արդարություն եւ զարգացում» (ԱԶԿ) կուսակցությունը հավաքել է ընտրողների ձայների 40,9 տոկոսը, ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցությունը՝ 25 տոկոսը, «Ազգային շարժում» (ԱՇԿ) կուսակցությունը՝ 16,3 տոկոսը եւ քրդական ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը (ԺԴԿ)՝ 13,1 տոկոսը: Ուժերի նման ձեւակերպումը թույլ չի տալիս ստեղծել միակուսակցական կառավարություն:*

*Թուրքիայի վարչապետի պաշտոնակատար Ահմեթ Դավութօղլուն երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանձնարարությամբ ձեռնամուխ կլինի առաջիկա 45 օրերի ընթացքում թուրքական նոր կառավարության ձեւավորմանը: Նշենք, որ «Ազգայնական շարժում» կուսակցությունը մերժել է իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության հետ կոալիցիոն կառավարություն ստեղծելու առաջարկը:*

ԻՆԴՈՆԵԶԻԱ

## ԱՎԻԱՎԹԱՐ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Ինդոնեզիայում «Հերկուլես» Ս-130 ռազմափոխադրական ինքնաթիռն աղետի է ենթարկվել հունիսի 30-ին Սումատրա կղզու հյուսիսում գտնվող ռազմաօդային ուժերի բազայից թռիչքից «մի քանի րոպե անց»: «Հերկուլես»-ի ընկնելու վայրում՝ Մեդան քաղաքի մերձակայքում, սաստիկ հրդեհ է բռնկվել: Ականատեսների վկայությամբ, ինքնաթիռը պայթել է «Գոլդեն Էլեւան» հյուրանոցի տանիքի վրա: Ընկնելիս ինքնաթիռը հարվածել է մի քանի բնակելի շենքերի ու ավտոմեքենաների: Ինքնաթիռի կործանման հետեւանքով զոհվել է ավելի քան 140 մարդ: Կործանված ինքնաթիռում եղել են անձնակազմի 12 անդամ, ինչպես նաեւ 101 ուղեւոր:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՐԹԱԿԱՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ



*Վրաստանի կրթության նախարարության կազմակերպմամբ եւ երկրի առողջապահության նախարարության աջակցությամբ, անցկացվեց մասնագիտական կրթության եւ վերապատրաստման համակարգչային խորհրդի սեկտորային նիստը, որը գլխավորում էր կրթության նախարար Թամար Սանիկիձեն:*

Խորհուրդը հիմնվել էր Վրաստանի կառավարության ու Եվրամիության միջեւ «Զբաղվածությունը եւ մասնագիտական կրթությունը» համաձայնագրի ֆինանսավորման վերաբերյալ կնքած պայմանավորվածության հիման վրա:

Հանդիպմանը քննարկվեցին 2015 թվականի համար մասնագիտական զարգացման քաղաքականության ակտիվացման եւ նախագծով նախատեսված Եվրամիության տեխնիկական օգնության միջոցառումները: Եվրամիության հետ համատեղ մշակած համապատասխան վերահսկողության ու հաստատված ռազմավիրության համաձայն, Վրաստանը լրիվությամբ կատարել է մասնագիտական կրթության ընդլայնում նախատեսող բոլոր պարտավորությունները: Հետեւաբար, Վրաստանը լրիվությամբ կստանա եւ երկրորդ տրանշով նախատեսված Եվրամիության օգնությունը:

ԱԼՅԱՆՍ

## ՆԱՏՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿԱՅՑԵԼԻ ՎՐԱՍՏԱՆ



*ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգն այս տարվա օգոստոսին կայցելի Վրաստան եւ կմասնակցի Վրաստանի հետ համատեղ ՆԱՏՕ-ի ուսումնավարժական կենտրոնի բացման արարողությանը:*

Ենս Ստոլտենբերգի Վրաստան այցի հարցը քննարկվել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուի եւ Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու միջեւ Բրյուսելում կայացած հանդիպմանը:

Հանդիպմանը կողմերը քննարկել են եկող տարի Վարշավայում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովում Վրաստանին ՆԱՏՕ-ի անդամակցության գործողությունների ծրագիր տրամադրելու հեռանկարները:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՆՈՐ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ

*Հունիսի 30-ին Մառնեուլիում անցկացվեց հանդուրժողականության եւ քաղաքացիական ինտեգրման ազգային հիմնադրույթի ու 2015-2020 թվականների համար գործողության ծրագրի շնորհանդեսը:*

Շնորհանդեսը անցկացրին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի աշխատակազմի աշխատակիցներ Թինաթին Գոգելիան, Զվիադ Զվիադաձեն եւ Զաուր Դարգալին:

Հանդիպմանը քննարկվեցին հիմնադրույթի գլխավոր ուղղությունները՝ օրենքի գերակայությունը, կրթությունն ու պետական լեզուն, լրատվամիջոցներն ու տեղեկատվության մատչելիությունը, քաղաքական ինտեգրումն ու քաղաքացիական մասնակցությունը, սոցիալական եւ տարածաշրջանային ինտեգրումը, մշակույթն ու ինքնությունը:

Շնորհանդեսից հետո վերոնշյալ թեմաներով անցկացվեցին բանավեճեր:

ՎԱՐԿԱՆԻՇ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է




*Աուդիտորական եւ բիզնես-խորհրդատվական BDO ընկերությունը հրապարակել է աշխարհի երկրների «International Besiness Compass-2015» ներդրումային միջավայրի ուսումնասիրության արդյունքները: Ուսումնասիրություններն իրականացվել են տնտեսական, քաղաքական-իրավական եւ սոցիալ-մշակութային ուղղություններով:*

Ուսումնասիրության համաձայն, 2014 թվականի համաձայնությամբ, Վրաստանը հինգ կետով բարելավել է իր դիրքերը եւ ներկայումս զբաղեցնում է 43-րդ տեղը: Նշենք, որ 2013 թվականին Վրաստանը 54-րդն էր:

Նախորդ տարվա համեմատությամբ, յոթ կետով նահանջել է Հայաստանը, այն զբաղեցնում է 66-րդ տեղը: 13 կետով բարելավելով իր դիրքերը, Ադրբեջանը հանգրվանել է 65-րդ տեղում: 89-րդ տեղում է Ուկրաինան, իսկ Ռուսաստանը զբաղեցնում է 100-րդ հորիզոնականը: Թուրքիան վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 54-րդ տեղը:

Աշխարհում խոշորագույն սպառողական կոնտենտ՝ «Numbeo»-ի տվյալների բազայում, Վրաստանն աշխարհի 86 երկրների թվում կյանքի որակի վարկանիշով հայտնվել է 57-րդ տեղում: Ըստ ուսումնասիրության, վարկանիշային սանդղակում առաջատար են Շվեյցարիան, Գերմանիան, Շվեդիան, ԱՄՆ-ը, Ֆինլանդիան, Դանիան, Ավստրիան, Ավստրալիան, Կանադան եւ Նոր Զելանդիան: Ուսումնասիրությունները հիմնվում էին մի շարք չափանիշների վրա, այդ թվում՝ բնակչության գնողական ունակությունը, անվտանգության մակարդակը, սպառողական գները, անշարժ գույքի գները, առողջապահության համակարգը, տրանսպորտային ենթակառույցը եւ էկոլոգիական իրավիճակը:

Վարկանիշային աղյուսակում Հայաստանը հայտնվել է 60-րդ հորիզոնականում, Ռուսաստանը՝ 72, Ուկրաինան՝ 75-րդ տեղում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵ. «ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՔՆՆԱՐԿԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»



*Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեպքում, կառավարությունը կքննարկի համաֆինանսավորման հնարավորությունը:*

Անդրադառնալով ջերմակայանի՝ ազգային էլեկտրակարգավորման հանձնաժողովին հասցեագրած սակագնի վերանայման պահանջ ներկայացնող դիմումին, Կախի Կալաձեն նշեց, որ լարիի արժեզրկումը լուրջ հիմնախնդիրներ է ստեղծել էլեկտրաընկերությունների համար: «Ներկայումս հանձնաժողովը քննարկում է ներկայացված հայտը, դրա համար պահանջվում է ժամանակ: Եթե սակագնի բարձրացումը լինի անխուսափելի, ապա կառավարությունն այդ հարցը կքննարկի: Միայն էներգետիկայի նախարարությունը նման հարցի լուծումը չի կարող իրականացնել»,- հայտարարեց Կալաձեն:

## ՉՇԱՐԿԱԴՐՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Այսօրվա դրությամբ, 447,245 հազար ֆիզիկական անձ լրացրել է չհարկադրվող նվազագույնի վերադարձման գործընթացի համար անհրաժեշտ Վրաստանի ֆինանսների նախարարության, եկամուտների ծառայության ձեւաթուղթը:*

Ինչպես տեղեկացրին ծառայությունում, դիմորդների մի մասն արդեն ստացել է համապատասխան գումար, մյուսները կստանան օրենքով սահմանված ժամկետում: Հիշեցնենք, որ չհարկադրվող նվազագույնի վերադարձման գործընթացը մեկնարկեց ընթացիկ տարվա ապրիլի 1-ից: Վրաստանի քաղաքացիներին՝ որպես չհարկադրվող նվազագույն վերադարձվում է մինչեւ 360 լարի գումար, որը պահվել է 2014-ին, նրանցից, ում տարեկան եկամուտը չի գերազանցել 6 հազար լարին:

Նշենք, որ անցյալ տարի չհարկադրվող նվազագույնը վերադարձվել է 470 հազար քաղաքացու, վերադարձված ընդհանուր գումարը կազմել է 130 միլիոն լարի:



### ԲԱՑՎԵՑ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

*Հուլիսի 2-ին Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն մասնակցեց առողջապահության նախարարության ազգային ուսումնական կենտրոնի բացման արարողությանը: Ինչպես տեղեկացրել են գերատեսչությունից, կենտրոնը արդեն այսօր կընդունի բոլոր նրանց, ովքեր ցանկանում են բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը: Կենտրոնում վերապատրաստում կարող են անցնել բոլոր մասնագիտությունների բժիշկներն ու բուժքույրերը:*

### 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՒՄ Է 3729635 ՄԱՐԴ

*Վրաստանի վիճակագրական վարչության գործադիր տնօրեն Մերի Դաուշվիլին հայտարարեց, որ 2014 թվականի մարդահամարի տվյալներով Վրաստանում ապրում է 3729635 մարդ: Նրա խոսքերով, սխալը կազմում է մոտ 2 տոկոս: Ինչպես նշեց Դաուշվիլին, վերոնշյալ թվաքանակությունը նախատեսում է՝ ինչպես Վրաստանի քաղաքացիներին, այնպես էլ այն մարդկանց, ովքեր Վրաստանի քաղաքացի չեն, սակայն առաջիկա 12 ամիսների ընթացքում գտնվելու են Վրաստանի տարածքում: Անդրադառնալով Վրաստանից արտագաղթած քաղաքացիների թեմային, Մերի Դաուշվիլին նշեց, որ վիճակագրական վարչությունը ստույգ տվյալներ չունի Ռուսաստանում 800 հազար վրաց էմիգրանտների առկայության վերաբերյալ:*

### ՀԱՆՁՆԵԼ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԶԻՆԱՄԹԵՐՔ

*Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում բնակիչների կողմից կամավոր հանձնվել է մեծ քանակությամբ զինամթերք: Վրաստանի ՆԳ նախարարության տվյալներով, հանձնվել է 2248 փամփուշտ, 8 կարճափող հրացան, 3 հրացան, 57 ձեռքի նռնակ, ազդանշանային 2 հրթիռ, հակատանկային 3 ական, այլ զինամթերք:*

### ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ՝ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԱՆՎԱՆ

*Թբիլիսիի քաղաքային խորհուրդը հունիսի 30-ին որոշում է ընդունել Վրաստանի մայրաքաղաքի միջազգային օդանավակայանին շնորհել վրացի պոետ Շոթա Ռուսթավելու անունը:*

*Ընդդիմությունը չի պաշտպանել այս նախաձեռնությունը, որով հանդես էր եկել վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Ընդդիմության ներկայացուցիչները չեն մասնակցել քվեարկությանը:*

### ԵՎՍ ՄԵԿԱԿԱՆ ԶՈՀ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

*Ինչպես տեղեկացրել է «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը, Սիրիայում իսլամական պետության կողմից մարտնչողների շարքում զոհվել է Վրաստանի 23-ամյա քաղաքացի Թուրպալ Բորչաշվիլին: Նա ծնունդով Պանկիսի կիրճի Ջաբախեւի գյուղից էր: Տեղացիների խոսքերով, երիտասարդը վեց ամիս մեկնել էր Թուրքիա՝ աշխատանքի: Բորչաշվիլին թվով 14-րդ Վրաստանի քաղաքացին է, որը զոհվել է Սիրիայում, կռվելով իսլամական պետության կողմնակիցների շարքում:*

*Նույն հեռուստաընկերության տեղեկատվությամբ, Ուկրաինայում հայտնաբերվել է պաշտոնական Կիեւի կողմից Արեւելյան Ուկրաինայում կռվող Վրաստանի քաղաքացի Կոնստանտին Լաշխիի դին: Ծնունդով սուխումցի Լաշխին Կիեւ էր մեկնել ութ ամիս առաջ: Այստեղ մնացել են նրա կինն ու անչափահաս երեխան:*

ՎԻԶԱ

# ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԱՅՑԵԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




*Վրաստանի կառավարությունը հրապարակել է այցեգրերի հանձնման, երկարացման եւ դրանց գործողության ժամկետի դադարեցման կարգի հաստատման որոշումը: Նորմատիվային նոր ակտը անցյալ տարի ընդունված հին օրենքի համեմատությամբ, շատ ավելի ազատականացված է եւ դրանում տերմիններն ու պարտավորությունները հստակեցված են:*

Հիմնական փոփոխությունը նախատեսում է D5 կարգի այցեգրի գործող տեսակների լրացմանը: Սույն այցեգիրը տրվում է այն մարդկանց, ովքեր Վրաստանի տարածքում ունեն 35 հազար դոլար շուկայական գնին գերազանցող անշարժ գույք: Արտոնությունը տարածվում է նաեւ այն դեպքում, եթե անձը հանդիսանում է սեփականություն ունեցողի ընտանիքի անդամը: Գույքի գնահատումն իրականացնում է միասնական ազգային հավաստագիր ունեցող հավաստագրային մարմնի ներկայացուցիչը: Սակայն վերոնշյալ արտոնությունը չի տարածվում գյուղատնտեսական նշանակության հողերի վրա: D5 կարգի այցեգիրը տրվում է մեկ տարի ժամկետով՝ Վրաստան բազմակի մուտք գործելու իրավունքով: Այցեգրի գործողության ժամկետը դադարեցվում է գույքի նկատմամբ սեփականության ժամկետի ավարտման հետ միասին: Համապատասխան մարմինները այցեգրի հանձնման հարցը լուծելու են օրացուցային տասը օրվա ընթացքում:

Նոր որոշման համաձայն, ընտանիքի միավորման նպատակով, Վրաստան ժամանած անձանց համար նախատեսված D4 կարգի այցեգիրը տրվում է այն մարդկանց, ում ընտանիքի անդամներն արդեն ստացել են D1, D2, D3 այցեգրեր: Նշենք, որ նշյալ այցեգրերից օգտվում են այն անձինք, ովքեր Վրաստանում էին գտնվում աշխատանքի, գիտական, մարզական, մշակութային կամ կրթական առաքելություններով, կամ սովորում են հեղինակային ուսումնական հաստատություններում: Տարանցիկային այցեգրերի ժամկետն ավելացվում է հինգ օրով եւ կկազմի տասը օր:

Կառավարության ընդունած որոշման մեջ ավելացվել է հոդված, ըստ որի՝ օտարերկրացիներին տրվում է D3 եւ D5 կարգի այցեգրերի ժամկետի երկարացման իրավունքը:

ԹԲԻԼԻՍՅԱՆ ՏԱՐԵՐՔ

# ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԿՍԵԼ ԵՆ ՏՈՒԺՅԱԼՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## ՋՐՀԵՂԵՂԻՑ ՏՈՒԺՅԱԼՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՆԳԱՆԱԿՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 25 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

*Թբիլիսիում տարերային աղետի հետեւանքների վերացման եւ բնական աղետից տուժյալների օգնության համար բացված հատուկ հաշվի վրա, ներկա դրությամբ, փոխանցվել է 23562002 լարի:*

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ֆինանսների նախարարությունը, հունիսի 28-ի դրությամբ, վերոնշյալ գումարից բացի, փոխանցվել է 706553 ԱՄՆ դոլար եւ 13221 եվրո:

Վրաստանի ապահովագրության պետական վերահսկողության ծառայության տեղեկատվությամբ, Թբիլիսիում ավերիչ ջրհեղեղից մասնավոր եւ իրավաբանական անձանց ապահովագրված գույքին հասցված վնասը կազմել է շուրջ 4,24 մլն լարի (մոտավորապես 1,88 մլն դոլար): Ընդամենը վնասվել է 121 ավտոմեքենա եւ անշարժ գույքի 82 օբյեկտ, որոնք ապահովագրված են եղել:

Վնասված ավտոմեքենաների դիմաց ապահովագրական ընկերություններն արդեն փոխհատուցել են մասնավոր անձանց հասցված վնասի 70 տոկոսը եւ իրավաբանական անձանց կրած վնասի 40 տոկոսը: Ինչ վերաբերում է անշարժ գույքին, վնասի փոխհատուցումը տեղի կունենա միայն դրա ստույգ չափը պարզելուց հետո:

Թբիլիսիի քաղաքապետարանն ուսումնասիրելով սողանքի եւ ջրհեղեղի արդյունքում տուժյալ բնակիչների վնասների չափը, նրանց բաժանել է երկու կատեգորիայի՝ նրանք, ովքեր կորցրել են բնակարանները եւ նրանց, ում բնակարանը հնարավոր է վերականգնել: Այդ մասին հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան եւ հավելեց, որ




տարերքից տուժած բնակիչների փոխհատուցման տրման կարգը քաղաքապետարանն ուղարկել է Թբիլիսիի սակրեբուլոյի քննարկմանն ու հաստատմանը:

Հիշեցնենք, որ լույս հունիսի 14-ի գիշերը հորդառատ անձրեւի եւ սողանքային գործընթացների հետեւանքով Թբիլիսիում հեղեղվել էին Վերե գետի հովտում գտնվող օբյեկտները, ներառյալ կենդանաբանական այգին, «Մզիուրի» զբոսայգին, բնակելի շենքեր, քաղաքի կենտրոնական փողոցներ, ինչպես նաեւ վնասվել էր ենթակառուցվածքը: Ըստ վերջին տվյալների՝ զոհվել է 19 մարդ, եւս երեք հոգի անհետ կորած է համարվում:

# ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԾՈՎԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱ՞ՄԲ

*Այսպիսով տեղի ունեցավ այն, ինչ պետք է տեղի ունենար, ինչը սպասելի էր բոլոր նրանց համար, ովքեր թեկուզ մի փոքր ունակ են մտածելու:*

Ոչ այնքան ուժեղ, սակայն Վերե գետի ջրակուտակման ավազանի վրա այսպես «հաջողությամբ» տեղացած անձրեւի արդյունքում տեղի ունեցավ աղետալի սողանք: Հատկանշական է, որ ներկայիս սերնդի հիշողության մեջ դա երկրորդ նման դեպքն է: 60-ական թվականներին էլ կենդանաբանական այգին հեղեղվեց, եւ այն ժամանակ էլ վանդակներում զոհվեցին կենդանիներ: Ըստ երեւույթին, այդ մասին արդեն հասցրել էին մոռանալ: Պատմության դասն անտեսության էր մատնվել եւ անցած 50 տարիների ընթացքում ոչինչ չէր արվել նման աղետի կրկնությունը կանխելու համար: Չէր արվել ոչինչ, թեպետ հարկ էր վերացնել փեթակը փակող ծածկը, առավել եւս պետք չէր դրա ափերին բարձրացնել բազմահարկ շենքեր: Արդյունքում, եթե առաջին հեղեղման ժամանակ զոհվեցին միայն կենդանիները, ապա երկրորդը՝ ե'ւ կենդանիների, ե'ւ մարդկային զոհերի պատճառ դարձավ: Օրինաչափ հարց է ծագում. ինչո՞ւ էինք լռում, թեկուզ ես, սակայն ասեմ, որ այդ մասին ժամանակին գրել եմ «համապատասխան» կառույցներին, թեպետ նույն հաջողությամբ այն կարող էի գցել աղբարկղ, քանի որ ոչ մի նամակի պատասխան այդպես էլ չստացա: Ըստ երեւույթին, դիմումներս պաշտոնավորներին չէին հետաքրքրում:

Իսկ այսօր ահա խոսում են կենդանաբական այգին թբիլիսյան ծովի տարածք տեղափոխելու նպատակահարմարության մասին: Նման ելույթները ոչնչով հիմնավորված չեն, դրանք միայն պայմանավորված են նոր ֆինանսավորում (բնականաբար, այդ գումարները տնօրինողների կողմից դրանց յուրացման հավանականությամբ) ստանալու ցանկությամբ: Սակայն, պետք չէ մոռանալ, որ կենդանաբանական այգու հիմնական հաճախորդները սովորաբար անչափահաս երեխաների հետ ծնողներն են: Դե, հիմա պատկերացրեք՝ ինչպես են նրանք հասնելու Լոտկինի բարձունք՝ երեխաներին վանդակների մեջ փակված գազաններին ցույց տալու համար: Հավանաբար, նման բավականություն իրենց կարող են թույլ տալ միայն այն մարդիկ, ովքեր իրենց սեփական մեքենաները, իսկ ինչպես են վարվելու մյուսները: Ի՞նչ է, նրանց համար ավտոբուսի նոր ուղերթ են բացելու: Դժվար չէ հասկանալ, որ այդ ավտոբուսները միայն մի դեպքում կարող են գործել, եթե ուղերթն իրեն արդարացնի:

Իսկ հիմա մի քանի խոսք՝ թբիլիսյան ծովի մասին: Ինչի կվերածվի այն, եթե հարեւանությամբ տեղակայվի կենդանաբանական այգին: Չէ՞ որ այն կդառնա կղանքի վիթխարի աղբյուր, ինչը հարկ է ինչ-որ տեղ թափել: Հետեւաբար, որպես միակ լողափ թբիլիսյան ծովը կդադարի իր գոյությունը: Եթե դրան ավելացնենք այն, որ Լիսի եւ Կրիա լճակները դրանց «բարեկարգման» ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում արդեն վաղուց վերածվել են ցեխաջրի լճակների, էլ չենք խոսում՝ Քուռ գետի մասին, ապա պատկերն ավելի քան տագնապալի է:

Այնպես որ, նման նորամուծությունից ոչինչ լավ սպասել չի կարելի: Հարցի կարգավորման համար ուղղակի պետք է կարգավորել Վերեի հունը: Կենդանաբանական այգին բոլորի համար պետք է լինի մատչելի, հետեւաբար այն պետք է լինի քաղաքի կենտրոնում կամ քաղաքից ոչ հեռու: Իսկ ինչ վերաբերում է հունիսի 13-ի-լույսի 14-ի գիշերվա աղետի կրկնությանը, ապա, ով կարող է երաշխավորել, որ այն կկրկնվի ոչ թե հարյուր տարի անց, այլ՝ վաղը: Ընդհանրապես, գետերի վերածումը կղանքի վտարման հունի, դա էկոլոգիական մեղք է, ինչն արդարացում չունի:

***ՀԵՆՐԻԽ ԱՎԱԿՈՎ***

***Կենսաբանական գիտությունների թեկնածու, Վրաստանի ազգային թանգարանին առընթեր հնէաբանական ինստիտուտի աշխատակից-խորհրդատու***

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՁԵՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ ՑՈՒՅՑ ՉԻ՞ ՏԱԼԻՍ, ՈՒՐԵՄՆ ԱՆՑԵՔ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռարձակմամբ:

Վրաստանի հաղորդակցության ազգային հանձնաժողովը առավելագույնս փորձում է բուկլետներով կամ հեռուստագովազդերով բնակչությանը տեղեկացնել, թե ինչ է նշանակում թվային հեռարձակում, այն հաշվով, որ բնակիչները նախապատրաստված դիմավորեն նորամուծությունը, թեպետ հանուն արդարության պետք է նշել, որ շատերի մոտ թվային հեռարձակման վերաբերյալ մակերեսային պատկերացում է:




Նորամուծությունը առնչվում է բնակչության այն կատեգորիային, որը հեռուստաալիքներն ընդունում է բաց եթերից, այսինքն՝ տանիքներին մոնտաժած ալեհավաքներով եւ, որի հեռուստացույցը զուրկ է DVB-T2 ստանդարտի աջակցությունից: Հասարակության այդ հատվածին թվային ձեւաչափով բաց հեռուստաազդանշանն ընդունելու համար կպահանջվի հատուկ սարք՝ «Սեթ-թոփ բոքս» սարքավորումը, որը միացվում է հին հեռուստացույցին: Մի խոսքով, բարեփոխումը վերաբերում է հավասարապես բոլոր ընտանիքներին, բացառությամբ նրանց, ովքեր կաբելային, արբանյակային եւ ինտերնետ-հեռուստատեսության սպառողներ են համարվում:

«Սեթ-թոփ բոքս»-ը կարելի է գնել սպառողական տեխնիկայի խանութներում: Սարքը գնելիս, ցանկալի է առանձնակի ուշադրություն հատկացնել նվազագույն տեխնիկական պարամետրերի վրա, մասնավորապես՝ սարքն ունի արդյոք DVB-T2 ստանդարտի աջակցությունը, դրանով կարելի է արդյոք ընդունել վրացական հեռուստաալիքները, ինչ տառատեսակով կարելի է իրականացնել կարգավորումը, տրվում է արդյոք NOMI, RCA կամ SCART կաբելները, որքանով է սարքը բավարարում անվտանգության պահանջներին: Բացի այդ, սարքը գնելիս, ցանկալի է ստանալ ապահովագրական պայմանները:

Նրանց համար, ովքեր ցանկանում են գնել ժամանակակից հեռուստացույց, որի գործառույթները համապատասխանում են Վրաստանի թվային հեռուստատեսությունների համար սահմանված տեխնիկական պահանջների փաստաթղթերին, անհրաժեշտ է միայն փոխել պարամետրերը:

Բնակչության այն հատվածը, որն օգտվում է հեռուստառարձակման տարանցիկ սպասարկումից (կաբելային օպերատորից) կամ արբանյակային հեռուստաարձակման հատուկ սարքավորումից, նրան վերոնշյալ նորամուծությունը չի առնչվում եւ նրանց «Սեթ-թոփ բոքս» սարքավորումը չի պահանջվում, եթե, իհարկե, չեն ցանկանում բաց եթերով ընդունել հեռարձակումը:

Սոցիալապես անապահով ընտանիքների համար, ում վարկանիշային միավորը 70 000 է եւ պակաս, պետությունը կաջակցի գնել սերտիֆիկացված «Սեթ-թոփ բոքս»-եր եւ Վրաստանի փոստի օգնությամբ կբաժանի տարածաշրջանային սպասարկման կենտրոններում:

Սահմանափակ ունակություններ ունեցող մարդկանց ընտանիքներին պետությունը ապահովում է «Սեթ-թոփ բոքս»-ը բնակության վայր առաքելուն:

Առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ «Թվային հեռուստաարձակման գործակալության» 1480 թեժ հեռախոսահամարով:

Ինչ վերաբերում է թվային հեռուստաարձակման առավելություններին, ապա, նորամուծության ներդրմամբ զգալիորեն կբարելավվի ձայնի եւ պատկերի որակը, կաճի հեռարձակողների քանակը եւ մեդիա շուկայում կստեղծվի մրցունակ միջավայր, սահմանափակ ունակություններ ունեցող անձանց համար հնարավոր կլինի օգտագործել աուդիո-մատչելի պատկերներ եւ ենթագրեր:

Ըստ տարածաշրջանների թվային հեռուստաարձակմամբ, համանման հեռուստաարձակման փոխարինմանը կնախորդեն հանդիպումները, որոնց նպատակը նորամուծության վերաբերյալ տեղի բնակչությանը մանրամասն տեղեկատվություն հաղորդելն ու դրա ներդրման համար մարդկանց ժամանակի վերապահումն է: Մասնավորապես, Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում նման հանդիպումները կանցկացվեն հուլիսի 27-ին Բաթումի եւ Քոբուլեթի քաղաքներում, իսկ թվային հեռուստաարձակման անցումը կիրականացվի հուլիսի 30-ից: Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում հանդիպումները կանցկացվեն օգոստոսի 15-ին Ախալցիխե եւ Բորժոմի քաղաքներում, իսկ անցումը կիրականացվի օգոստոսի 18-ից:

***ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ***